

Պղատոն Գուրգէնբէկեանց  
Պօղոս Ղամբարեանց  
Սողոմոն Մելիք — Մեհրաբեանց  
Խաչատուր Քալանթարեանց  
Գէորգ Ա. քիմեան  
Գասպար Նահապետեանց  
Իսկ սոցա տեղակալներ  
Բարեկրօն Ղեւոնդ քահ. Խարազեանց  
Մեծ. Պարոնայք  
Գաբրիէլ Սունդուկեանց եւ  
Գաբրիէլ Հախվերտեանց

Արարատ ամսագրոյս խմբագրութիւն  
շնորհաւորելով յիշեալ նորընտիր ան-  
գամոց Հոգաբարձական ծանր բայց ազ-  
գօգուտ եւ վսեմ պաշտօնը՝ կմաղթէ  
կարողութիւն եւ յաջողութիւն՝ մի-  
անգամայն կյուսայ՝ որ սոքա պիտի  
սիրեն խօսքէն աւելի գործոց արդիւն-  
քը ցուցանել եւ իրական յառաջա-  
գիմութեան շաւղին մէջ զարգացու-  
ցանելով փառաւորել ներսիսեան գրա-  
րանոցը ներկայ Գեր. Առաջնորդ Տ.  
Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոսի հետ սիրով  
եւ համաձայնութեամբ խորհելով եւ  
գործակցելով ըստ ամենայնի եւ ամեն  
բանի մէջ.

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇԻԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ  
ԳՊՐՈՅԻ ՀԱՅՈՑ ԱՂԵՔՍԱՆԳՐԱՊՈԼՈՑ.

### Խճագիրութեան Երաբար Ահագիրոյ.

Հոգաբարձութիւնս վիճակային Հոգեւոր Գրա-  
րոցի Հայոց Աղէքսանդրապօլու ըստ տրամադրու-  
թեան 30-րդ յօդուածոյ կանոնադրութեան  
նոյն Գրարոցի ընդ այսմ առաքելով ի Խմբագրու-  
թիւնդ զտարեկան համառօտ հաշիւ մօից եւ ծա-  
խուց վիճակային Հոգեւոր Գրարոցի վասն անցեալ

1875 ամի, խոնարհարար խնդրէ հրատարակել  
զայն յէջս ազգաշահ լրագրոյն Արարատայ ի գի-  
տութիւն Հայագնեայց.

Նախագահ Սուքիաս Եպիսկոպոս Պարզեանց.  
Հոգաբարձոք Յովսէփ Ա. քհ. Կոստանեանց  
Մկրտիչ Կոստանեանց  
Յակոբ Ղասապեանց  
Յարութիւն Զիթաղեանց  
Գործակար Կ. Զանիբէկեանց

Ի 54 Յռնէլէ 1876 -ի

### Ի Վ. Աղէքսանդրապօլ:

Ա. Հոգաբարձութեան հան.

Նախագահ Հոգաբարձութեան գրարոցի Փոխա-  
նորդ թեմին Աղէքսանդրապօլու, վեց Հոգաբար-  
ձուք, յորոց մինն վարէ զպաշտօն գանձապա-  
հութեան եւ մի գործակար:

Վեց կանդիտաք, յորոց մինն ի պատճառս  
հրաժարման միոյ յանդամոց Հոգաբարձութեան  
պարտի վարել զպաշտօն նորա. Բառասուն պատ-  
գամաւորք՝ հաւատարմատարք ի կողմանէ ժո-  
ղովրդեան յընտրել զՀոգաբարձուս:

Բ. Ուսուցիչ հան.

Ուսուցիչ.

|                                                                                                                            |     |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Կրօնի Հայոց ուղղափառ դասնութեան                                                                                            | 120 |
| Աշխարհագրութեան, Բնականութեան Պատ-<br>մութեան, Մարդկագիտութեան եւ Հայոց<br>լեզուի .                                        | 700 |
| Հայոց լեզուի եւ Պատմութեան Հայոց ի<br>միում դասատան եւ Բնագիտութեան .                                                      | 600 |
| Թուաբանութեան բոլոր դասատանց .                                                                                             | 360 |
| Վերակացութեան եւ Բարոյախօսու-<br>թեան .                                                                                    | 300 |
| Ռուսաց լեզուի ի բարձր դասարանս .                                                                                           | 450 |
| Պատմութեան Ռուսաց, Ռուսաստանի<br>աշխարհագրութեան, սկզբունք Աղբերայի<br>(գրահաշիւ) եւ Երկրաչափութեան ի չորրորդ<br>դասատան . | 150 |
| Վայելագրութեան Հայոց, Գծագրու-<br>թեան եւ Երկրաչափութեան յԲ եւ յԳ դա-<br>սատունս .                                         | 300 |

|                                     |     |
|-------------------------------------|-----|
| Ռուսաց լեզուի և Վայելչագրութեան     | 300 |
| Հայոց լեզուի ի պատրաստական դասա-    |     |
| տունս                               | 500 |
| Եկեղեցական Չայնագրութեան և Ազգա-    |     |
| յին երգեցողութեան ի բոլոր դասատունս | 120 |

Աշակերտք.

|                                             |     |
|---------------------------------------------|-----|
| Թոշակատու                                   | 239 |
| Զրիաթոշակ                                   | 53  |
| Իսկուհի — Բաց ի վերագրեալ աշակերտաց յըն-    |     |
| թացս անցեալ 1875 ամի ինն աշակերտք ու-       |     |
| սումնաւարտք վկայագրովք արձակեցան ի Դպ-      |     |
| րոցէն, յորոց երեքն արդէն ուսանին ի Ճեմարանի |     |
| Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի:                 |     |

Առարկայք ուսման

1. Արօն.
2. Հայոց լեզու.
3. Ռուսաց լեզու.
4. Թուարանութիւն Հանդերձ սկզբամբք գրա-
- Հաշույ:
5. Երկրաչափութիւն.
6. Պատմութիւն Հայոց և Ռուսաց՝ և Ընդհա-
- նուր.
7. Աշխարհագրութիւն Հայոց, Ռուսաց և Ընդ-
- հանուր.
8. Բնական Պատմութիւն.
9. Բնագիտութիւն (Ֆիզիքս).
10. Գծագրութիւն ընդ սկզբունց նկարչութեան.
11. Եկեղեցական Չայնագրութիւն և երգք Ազ-
- գային:
12. Վայելչագրութիւնք.
13. Մարմնամարզութիւն:

Գ. Նիւթիւնի հասն:

Աւսումնարանն պահպանի . արդեամբք պատ-  
կերի Եօթն վերաց Սուրբ Աստուածածնի սրբոց  
մասանց և ուխտադնաց Աւետարանաց, որք գտա-  
նին ի խորանի Աւագ Սուրբ Աստուածածին Եկե-  
ղեցոյ Աղէքսանդրապօլ քաղաքի, քի տոկոսեօք  
Աւսումնարանական դրամազիւոց յաւելլոց ի  
վերայգրեալ արդեանց, քի վարձադրամովք կըր-  
պակաց նոյն Եկեղեցոյ գարձուցելոց յօգուտ ու-

սումնարանի. և քի թոշակադրամովք ի կարողա-  
տէր ծնողաց աշակերտաց:

Մնացորդ ի 1874 ամէ՝ որք գտանին ի վերայ  
զանազան անձանց տոկոսեօք ի զանազան Ժամա-  
նակաց. . . . . 11588 98 %

Մուտք յընթացս 1875 ամի.

Գոյացեալ յընթացս 1875 ամի  
ի թոշակադրամաց աշակերտաց, ի  
զանձանակադրամաց սուրբ պատկե-  
րի՝ Սրբոց Մասանց և ամենափրկիչ  
սուրբ Աւետարանի, ի զնոց վաճա-  
ռեալ ցօրենոյ և ի տոկոսադրամաց  
պարտապանաց և ընդ . . . . . 6041 — 61

ամենն 17630 — 59 %

Ամենատեսակ տարեկան ծախք:

Ռոճիկք ուսուցչաց, գործաւարի,  
սպասաւորաց դպրոցիս, վճարեալ  
ի պէտս շինութեան նորոգ կրպակաց՝  
որք ի շրջապատի մայր Եկեղեցոյ և  
այլոց մանրամասն պիտոյից Դպրոցի  
ամենն. . . . . 7008 — 41

Զայս գումար ի բաց բարձեալ  
ի մտից գումարէ մնայ ի պատրաս-  
տի. . . . . 10622 — 18 %

Իսկուհի. նախ ի սոյն գումարէ 10487 ա. 50 կ.  
նն մուրհակագրօք ի վերայ զանազան անձանց  
բնակչաց Աղէքսանդրապօլ քաղաքի. և երկրորդ՝  
134 ա. 68 կ. և կէսն պատրաստի գումար:

Մննդաւորութեան հաշուոյ:

1. Վաճառելի գրեանք և իրեղէնք  
ի գրաւաճառանոցի վիճակային դրպ-  
րոցիս. . . . . 400
2. Ի վերայ զանազան անձանց  
100 ա. 55 կ. դրամք և երկու սոմար  
վեց կօտ ցօրեան . . . . . 100 55
3. Ի թոշակադրամաց աշակերտաց . . . . . 17

Գումարն 517 55

Մի տուն գնեալ ի Վարապետէ Զալթիկեանց  
որոյ վարձադրամն ի 6-էն Սեպտեմբրի 1873 ամի  
մինչ ցայս թիւ չէ ստացեալ:

Ուսումնարանն ունի բերել տուեալ խմայ-  
րաքաղաքէն Պետերբուրգոյ զանազան Ուսումնա-  
կան պիտոյք և մարդակազմութեան գործիք-  
քարտէզք, զրիսնք և այլ մանրամասն պիտոյք և  
պահպանին խնամարկութեամբ գործադրելով զիւ-  
րաքանչիւրսն յիւրումն պիտանաւորութեան:

Ի ՆՈՐ - ՆՈՒԻՋԵՆԱՆԷ

### ԽՖԽՖԻՆԻԱՆ ԱՐԱՐԱՐ ԱՏԱԳՐՈՅ՝

Նոր Նախիջևանի սուրբ Համբարձման եկեղե-  
ցւոյ Մեծապատիւ երեցփոխան Պետրոս Նիկո-  
ղայոսեան Խումաճեանցի խոհմ՝ մատակարարու-  
թեան յանձնուած Աստուծոյ տաճարին շինու-  
թեան և պայծառութեան համար արած բազմա-  
տեսակ աշխատանքը հրապարակաւ յայտնելը  
պարտք կհամարիմք մեզ ի տեղեկութիւն համազգի  
եղբայր ամնազորոյ միջոցաւ:

Մեծապատիւ Պետրոս Խումաճեանցը երեցփո-  
խանութեան պաշտօնը ընդունած օրէն ի վեր  
առանց խղճմտանաց վկայութեան դէմ մեղանշե-  
լու կրնամք ասել՝ զի սկսաւ եկեղեցւոյ ներքին և  
արտաքին նորոգութեամբ պարապել և զոր մինչև  
չայժմ՝ ալ կշարունակէ, շնայելով որ նորամէ ա-  
ռաջ եղած երեցփոխանները առանձին եկա-  
մուտներ ունէին և կրնային սորա արածները այն  
ժամանակները ամենայն հշտութեամբ անել՝ ինչ  
որ այժմ Պետրոս Խումաճեանցը արաւ և կանէ  
դարձեալ մեծամեծ ներութեանց նմարկուե-  
ով՝ առաջուան եկեղեցական արդեանց աղբիւր-  
ներուն սպառմանը պատճառաւ: Սակայն այս ալ  
չմոռանամք ասել՝ որ սա ճանաչելով իւր պար-  
տականութեան վնհ նշանակութիւնը և հաս-  
կանալով ժողովրդեան զինքը ընտրելոյն զխաւոր  
պատճառը՝ որն է յօգուտ եկեղեցւոյ և ոչ իւր  
անձնական շահուց և փառասիրութեան, հոգե-  
կան ջրմեռանդութեամբ շարժեալ աշխատեցաւ  
Աստուծոյ սուրբ տաճարը բարեզարդելու հնար-  
ներ գտնելու:

Ա. Անհախառ Վաթուղիկոսի կոնդակին հա-  
մաձայն՝ առաջինը քաղաքիս մէջ Պ. Պետրոս  
Խումաճեանցը եղաւ՝ որ սուրբ Համբարձման ե-

կեղեցւոյ գաւթի մէջ բացաւ ծխական Հոգեւոր  
գպրոց բոլորովին համեմատ ծխական գպրոցաց  
կարգադրութեանցը, որոյ մէջ մինչև ցայժմ կու-  
սանին 40 աղքատիկ ժողովրդոց որդիներ: Այս  
գպրոցին մէջ բաց ի միւս ուսանելի առարկաներէն՝  
1875 տարւոյ Յուլիսի սկզբին սկսուեցաւ դաս  
տրուել ընդունակ աշակերտաց Անհախառ Հայ-  
րապետի վնհ կամաց և ազգաշահ նպատակին  
համաձայն հայկական եկեղեցական ձայնադու-  
թիւնը, որոյ գասառուութիւնը յանձնուած է  
նոյն եկեղեցւոյ Ս. Սարկաւազ Փախալեանին:  
Աերջնոյն արիաջան աշխատութեամբը արդէն  
բաւական ժամանակ է՝ պատարագի բոլոր երգե-  
ցողութիւնը գեղեցիկ ներդաշնակութեամբ կերգեն  
նորուս աշակերտքը և յոյս կայ՝ որ ապագային  
մեր եկեղեցին՝ ունենայ նոր ձայնազրագէտ երգե-  
ցող դպիրներ:

Բ. Խսկըբանէ շինութեան եկեղեցւոյն՝ պատկեր-  
ները իրենց գեղեցկութիւնը կորսնցնելով անհամ-  
բերութեամբ կապաւէին խնամոց երեցփոխանի աշ-  
խատութեան՝ որ յարութիւն առնէին երևց հը-  
նութեան շապիկէն, ահաւասիկ Պ. Պետրոս Խում-  
աճեանցը առանց եկեղեցական արդեանց օգնու-  
թեան գտաւ քանի մի բարեպաշտ և հոգեւոր  
անձինք, որք նորա յորդարանօքը և խնդրանօքը  
եկեղեցւոյ բոլոր պատկերները նորոգել տուին ա-  
մենայապաճաւ և շքեղ կերպով:

Գ. Միայն աւագ խորանի խաչկալը մնացեր  
էր իւր առաջնուան հին դրութեան, բայց միշտ Պ.  
երեցփոխանը հնար կ'մտնէր այն ալ կերպով  
մի նորոգել տալու, որովհետեւ երկարատեւ փոր-  
ձոյ վախճանը յաջողութեամբ կ'պատկուի, այսպէս  
ալ Պետրոս Խումաճեանցի երկար մտածութեան  
վերջը շատ յաջողակ եղաւ և ահա յանկարծ  
տեսանք եկեղեցւոյ մէջ խաչկալի շինութիւնը  
որոյ վերայ շատ ականատեսներ հիացմամբ կ'նա-  
յեն և կ'զարմանան Պ. Երեցփոխանի հնարիմաց  
յաջողակութեանը վերայ:

Դ. Ժողովրդականք սորա Երեցփոխանութեան  
ժամանակին միայն արժանի եղան հրաւիրուել-  
յի եկեղեցի տարեկան ելից և մտից հաշուատեսու-  
թեան համար և հասկացողութիւն ունենալ ե-  
կեղեցւոյ դրութեան վերայ. սորանէ առաջնուան